# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 28 >> ապրիլի 2017 թվականի N 26 ք.Գյումրի

## <<ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N:111 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.20-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով, հաշվի առնելով <<Մաքուր Հայաստան>> ծրագրի 4.1.3-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքներում, միջպետական, միջմարզային և միջհամայնքային ճանապարհներին հարող տարածքներում սանիտարական մաքրման, աղբահանության աշխատանքների առավել արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու, աղբահանության համար չնախատեսված վայրերում դրա հետագա կուտակումները կանխելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) մարզային ենթակայության ընկերությունների և կազմակերպությունների միջոցով ապահովել վերջիններիս շենքերին հարակից տարածքներում սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացումը,

2) մարզի ճանապարհների շահագործումն ու ապահովումն իրականացնող կազմակերպությունների (անկախ դրանց պատկանելիությունից) և համայնքների

ղեկավարների հետ համատեղ ապահովել ճանապարհներին հարակից տարածքներում աղբահանության կազմակերպումը,

3) հանրային լայն իրազեկում ապահովելու նպատակով պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն առկա վիճակի և կատարված աշխատանքների մասին,

4) ապահովել յուրաքանչյուր փակված կամ տեղափոխված աղբավայրի մասին տեղեկատվության տեղադրումը Google Earth-ի հենքի վրա ստեղծված հարթակում (պարբերաբար):

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել բնակավայրերի ու դրանց հարակից տարածքների, բնական լանդշաֆտների, ճանապարհամերձ հատվածների, մշակութային և ժամանցային վայրերի մերձակա տարածքների կենցաղային և այլ տեսակի թափոններից մաքրումը, իրականացնել համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը.

2) Ապահովել համայնքի տարածքում առկա աղբանոցներից աղբի տեղափոխումը գործող աղբավայրեր, աղբի լցակույտերի ծածկումը, աղբավայրերի ցանցապատումը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 15-ի <<Հանձնաժողով ստեղծելու մասին>> N:111 կարգադրությունը:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2017 թվականի ապրիլի 28-ի N 26-Ա կարգադրության

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Սեյրան Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,

Ալբերտ Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,

Աշոտ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչություն պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ,

Վարդան Ռոստյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության <<Շիրակ>> մասնաճյուղի տնօրեն, հանձնաժողովի անդամ,

Ռուբեն Սանոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

Արտակ Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնքի ղեկավար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

Մխիթար Վարագյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքի ղեկավար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

Վարդան Իկիլիկյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքի ղեկավար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

Արծրունի Իգիթյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի ղեկավար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

Մերգել Ղարիբյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի համայնքի ղեկավար, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

Հրայր Կարապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Արամ Անտոնյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Մովսես Մանուկյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,

Գեղամ Բաղդասարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,

Լեյլի Ասլանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,

Սամվել Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,

Ջորիկ Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ, հանձնաժողովի անդամ,

Խաչատուր Խնձրցյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է